15 հունվարի 2009 թվականի N 61 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 7-Ի N 941-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 7-ի «Հայաստանի Հանրապետության հարկային վարչարարության ռազմավարության 2008-2011 թվականների ծրագիրը հաստատելու մասինե N 941-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման N 1 հավելվածի Մաս Բ. Գործողությունների (միջոցառումների) ցանկը և ժամանակացույցը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝
ՆՊԱՏԱԿ 1-Ի ԳԾՈՎ

- ***<u>Նպատակը</u>***. Խոշոր բիզնեսի ճիշտ, լիարժեք և ժամանակին հարկման ապահովում
- ***<u>Քաղաքականությունը</u>***.

1.1. Պետական եկամուտների մեջ հիմնական դերակատարում ունեցող հարկ վճարողների հարկման բազաների նկատմամբ հասցեական մոտեցում.

1.2. Պետական բարձրաստիճան պաշտոնյաների կողմից գործարարությամբ զբաղվելը կանխարգելող օրենսդրական և վարչարարական մեխանիզմի ներդրում.

1.3. Նոր քաղաքականության մշակում՝ հարկ չվճարող կազմակերպությունների անունների բացահայտման գծով.

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ		
NN ը/կ	*Միջոցառման անվանումը*	*Կատարման ժամկետը (սկիզբը և ավարտը. ամսաթիվը, ամիսը, տարեթիվը)*
1.	Խոշոր հարկ վճարողների ընտրության չափանիշների սահմանում և դրանց հիման վրա հարկ վճարողների գործերի փոխանցում խոշոր հարկ վճարողների հարկային տեսչություն	01.06.08-31.07.08
2.	Ներկայումս գործող 4 ոլորտային հարկային տեսչությունների միավորումը խոշոր հարկ վճարողների մեկ համախմբված հարկային տեսչության մեջ	01.07.08-31.12.08
3.	Ելնելով ոլորտային առանձնահատկություններից՝ ստուգումների իրականացման ուղեցույցների մշակում, կիրարկում (ներառյալ պարբերական վերանայումները)՝ առաջին հերթին դրանք ստեղծելով նախկին հատուկ հարկային տեսչությունների ոլորտների գծով: Նախապես ստեղծվում են ցանկալի ուղեցույցների ցանկ և մշակման ժամանակացույց	01.09.08 – 31.12.11*
4.	Խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության աշխատողների վերապատրաստում՝ ելնելով ոլորտային առանձնահատկություններից	01.10.08 – 31.12.11
5.	Խոշոր ապառքատերերի հետ կատարվող աշխատանքների նոր մեխանիզմների մշակում	01.10.08-31.03.09
6.	Ուսումնասիրությունների հիման վրա օրենսդրական փոփոխությունների նախագծի պատրաստում՝ այն մասին, որ պետական բարձրաստիճան պաշտոնյաների կողմից օրենսդրության խախտմամբ գործարարությամբ զբաղվելու դեպքերում օրենքով սահմանվեն կոնկրետ հասցեական պատասխանատվության խիստ նորմեր, և այն ՀՀ կառավարություն ներկայացնելը	01.11.08-31.03.09
7.	Պետական բարձրաստիճան պաշտոնյաների կողմից գործարարությամբ զբաղվելու դեպքերի բացահայտման նպատակով պետական մարմինների հետ համագործակցության ծրագրի մշակում	01.04.09-30.06.09
8.	Պետական բարձրաստիճան պաշտոնյաների կողմից գործարարությամբ զբաղվելու դեպքերի բացահայտման նպատակով գույքի և եկամուտների հայտարարագրերի միջոցով արդյունավետ հսկողության մեխանիզմների սահմանում՝ նախատեսելով հայտարարատու ֆիզիկական անձանց մոտ հսկողություն կազմակերպելու և անցկացնելու մասին ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	01.07.08-01.03.09
9.	Ուսումնասիրությունների հիման վրա ՀՀ կառավարություն օրենսդրական առաջարկություն ներկայացնելը՝ հարկ չվճարող կազմակերպությունների անունների բացահայտման ընթացակարգերի և արդյունքների հրապարակման իրավական հիմքերի ստեղծման նպատակով	01.07.08-28.02.09
10.	Ուսումնասիրությունների հիման վրա ՀՀ կառավարություն խոշոր կազմակերպություն-հարկ վճարողների մոտ միջազգային չափանիշներին համապատասխան պարտադիր աուդիտի անցկացման վերաբերյալ օրենսդրական առաջարկություն ներկայացնելը՝ ապահովելով նաև արդյունքների հասանելիությունը հարկային ծառայությանը	01.07.08-30.11.08

** Միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և (կամ) մարդկային ռեսուրսների ներգրավում: Արտաքին ֆինանսական ռեսուրս ասելով՝ հասկացվում է ինչպես Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն, այնպես էլ՝ միջազգային կամ օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցները:*

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝ ՆՊԱՏԱԿ 2-Ի ԳԾՈՎ

- ***Նպատակը***. Փոքր բիզնեսի համար արդյունավետ հարկային բեռի սահմանում՝ «փափուկե հարկային վարչարարության կիրառմամբ

- ***Քաղաքականությունը***.

2.1. Փոքր բիզնեսի համար հարկային հաշվետվությունների և այլ պահանջվող տվյալների քանակության ու պարբերականության կրճատում.

2.2. Փաստաթղթաշրջանառությունը փոքր բիզնեսի համար չպետք է ծանր խնդիր լինի, սակայն գրանցումների ծավալները պետք է էականորեն կարգավորվեն.

2.3. Հարկային ծառայությունը ներդնելու է նորաստեղծ փոքր բիզնեսին աջակցելու առանձին ծրագիր.

2.4. Փոքր ձեռնարկություններում ստուգումների պարբերականության կրճատում.

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ		
NN ը/կ	*Միջոցառման անվանումը*	*Կատարման ժամկետը (սկիզբը և ավարտը. ամսաթիվը, ամիսը, տարեթիվը)*
1	2	3
11.	Հարկային ծառայության կողմից հաշվետվությունների և այլ տվյալների տեսակների, ձևաթղթերի գույքագրման և օպտիմալացման վերաբերյալ առաջարկությունների քննարկման ժամանակ առանձին անդրադառնալ փոքր ու միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) առանձնահատկություններին՝ նրանց համար սահմանելով ավելի ցածր վարչարարական բեռ (տեԲս սույն փաստաթղթի Նպատակ 4-ի գործողությունների ժամանակացույցի 58-րդ կետը)	01.08.08-31.10.08*
12.	Նորաստեղծ փոքր բիզնեսին աջակցելու առանձին միջոցառումների ծրագրի մշակում և իրականացում	01.08.08 –30.06.09
13.	Փոքր ու միջին ձեռնարկատիրության սուբյեկտների (ՓՄՁ) դասակարգման նոր համակարգի մշակում ու ներդրում՝ հարկային օրենսդրության կիրառման նպատակով	01.07.08-31.07.08
14.	Ձեռնարկությունների ստեղծման և սպասարկման ոլորտում «մեկ պատուհանի՝ գաղափարի ներդրման քննարկումների կազմակերպում՝ միջգերատեսչական հարթության վրա	01.07.08-31.05.09
15.	Հաշվետվությունների թվի և դրանք ներկայացնելու պարբերականության կրճատում, հարկերի հաշվարկման պարզեցում՝ հենվելով կայուն ֆիքսված միատարր հարկային բազայի և հարկատեսակների վրա (օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկ)	01.07.08-31.07.08
16.	Մասնագիտացված կազմակերպությունների կողմից հաշվապահական ծառայությունների մատուցման գործընթացը ՓՄՁ-ի համար կազմակերպելու օպտիմալացման քննարկումներին մասնակցություն՝ ներառյալ հաշվապահական ստանդարտների առանձին փաթեթի մշակման հարցը	01.06.08-28.02.09
17.	Փոքր բիզնեսի ներկայացուցիչների համար հարկային հաշվառման առանձնահատուկ եղանակների, ինչպես նաև ստուգումների (օրինակ՝ 314 և 315 գրքերի վարումը, դրամարկղային գրքերի վարումը և այլն) կիրառման շրջանակների էական նվազեցում: Այդ նպատակով իրականացվելու են՝ - համապատասխան օրենսդրական փոփոխությունների նախապատրաս-	01.06.08-31.12.08

1	2	3
	տում և դրանք ներկայացնելը - միջգերատեսչական հարթությունում քննարկումների անցկացում՝ ստուգումների հնարավոր կոնսոլիդացման նպատակով - ռիսկային չափանիշների վրա հիմնված՝ ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի համակարգչային ծրագրի չափանիշների և կշիռների սահմանման ժամանակ հաշվի առնել ՓՄՁ-ի կարգավիճակ ունենալը	
18.	Փոքր բիզնեսի ներկայացուցիչների համար պարզեցված հաշվառման և հարկերի հաշվարկման ձեռնարկի (ինֆորմացիոն թերթիկի) մշակում, որը կվերաբերի 2008 թվականի վերջի հարկման պայմաններին	01.10.08-30.04.09*
19.	ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամի հետ առանձին ծրագրի մշակում և միջոցառումների իրականացում ՀՀ մարզերում (սեմինարներ, կլոր սեղաններ և այլ)	01.07.08-31.12.11

* *Միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և (կամ) մարդկային ռեսուրսների ներգրավում։ Արտաքին ֆինանսական ռեսուրս ասելով՝ հասկացվում է ինչպես Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն, այնպես էլ՝ միջազգային կամ օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցները։*

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝ ՆՊԱՏԱԿ 3-Ի ԳԾՈՎ

- ***<u>Նպատակը</u>***. Հարկային մարմնում կոռուպցիայի հաղթահարում

- ***<u>Քաղաքականությունները</u>***.

3.1. Հարկային ծառայողների աշխատավարձերի և այլ հատուցումների բարձրացում, արդյունավետ խրախուսման համակարգի ձևավորում.

3.2. Հարկային ծառայողների առաջխաղացման գործուն համակարգի ներդրում՝ որպես բաղադրիչ դիտարկելով նաև մասնագիտական վերապատրաստումը.

3.3. Հարկային ծառայողների ատեստավորման օբյեկտիվ մեխանիզմի ներդրում.

3.4. Հարկային մարմնում «ներքին աուդիտիե գործառույթի ըստ էության ներդրում.

3.5. Հարկ վճարողների նկատմամբ հարկային վարչարարական ընթացակարգերի միատեսակ կիրառման ապահովում.

3.6. Հարկային ծառայության նկատմամբ բողոքարկման համակարգի էական վերակառուցում՝ հաշվետվականություն, արդյունավետություն ապահովելու համար։ Նոր աստիճանի «թեժ գծիե գործարկում.

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ		
NN ը/կ	*Միջոցառման անվանումը*	*Կատարման ժամկետը (սկիզբը և ավարտը. ամսաթիվը, ամիսը, տարեթիվը)*
1	2	3
20.	Օրենսդրական առաջարկությունների նախապատրաստում և դրանք ներկայացնելը՝ Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի քննարկումների ժամանակ հարկային ծառայողների բազային աշխատավարձի՝ առնվազն 70 տոկոսով բարձրացման, իսկ 2010-2011 թթ.՝ յուրաքանչյուր տարի բազային աշխատավարձի 20 տոկոսով բարձրացման նպատակով	01.09.08-31.10.08* 01.09.09-31.10.09* 01.09.10-31.10.10*
21.	Համապատասխան նորմատիվային ակտերի նախապատրաստում և	01.07.08-28.02.09

1	2	3
	դրանք ներկայացնելը՝ հարկային ծառայության զարգացման ֆոնդի ձևավորման և ծախսային կառուցվածքի հիմնովին վերանայման (այն ավելի «արդյունքներին ուղղված դարձնելու) նպատակով	
22.	Հարկային ծառայության ուսումնական կենտրոնի ստեղծման նպատակով օրենսդրական փոփոխությունների նախապատրաստում ու դրանք ներկայացնելը և համապատասխան ուսումնական ծրագրերի կազմում: Այն պետք է ներառի նաև հարկային ծառայողների մասնագիտական կարողությունների անընդմեջ բարձրացման նպատակով պարտադիր վերապատրաստման ընթացակարգի սահմանումը:	01.07.08-31.12.08
23.	Հարկային ծառայողների պաշտոնական առաջխաղացման գործուն համակարգի ներդրում՝ այն կապելով նրանց մասնագիտական կարողությունների գնահատման չափանիշների հետ	01.10.08 –31.01.10
24.	Հարկային ծառայողների համար մրցույթի և ատեստավորման կարգի վերանայման նպատակով օրենսդրական փոփոխությունների նախապատրաստում և դրանք ներկայացնելը (հաշվի առնելով նաև օպերատիվ հետախուզության առանձնահատկությունները)	01.07.08-31.07.08
25.	24-րդ կետում նշված օրենսդրության առկայության պայմաններում հարկային ծառայության մրցութային և ատեստավորման միջգերատեսչական հանձնաժողովի նոր կանոնակարգի ստեղծում (հաշվի առնելով նաև օպերատիվ հետախուզության առանձնահատկությունները)	01.07.08-30.09.08
26.	Հարկային ծառայությունում «ներքին աուդիտիե առանձնացված կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում և գործառույթների հաստատում: Այդ ստորաբաժանումը պետք է ունենա պատշաճ հաշվետվողականություն և թափանցիկություն	01.07.08-31.08.08
27.	Ներքին աուդիտի արդյունքները (հարկային ծառայողի կողմից կատարված խարդախության կամ լուրջ խախտման) հանրությանը պարբերաբար ներկայացնելու ընթացակարգի սահմանում	01.07.08-31.10.08
28.	Հարկային ծառայության ներսում հարկային վարչարարության ընթացակարգերի միատեսակ կիրառման նպատակով համապատասխան ուղեցույցների և ձեռնարկների հաստատում՝ նախատեսելով դրանց հրապարակման հստակ ժամանակացույց	01.11.08 – 31.12.11*
29.	Հարկ վճարողների և հարկային ծառայողների համար հարկային վարչարարության ընթացակարգերի միատեսակ կիրառման վերաբերյալ ուսուցում	01.01.09-31.12.11*
30.	Հարկային ծառայության գործողությունների նկատմամբ բողոքարկման ընթացակարգերի բարելավում՝ վերանայելով գանգատարկման հանձնաժողովի անդամների թեկնածուների առաջադրման կարգը և հանձնաժողովի աշխատակարգը	01.06.08-30.06.08
31.	Հարկ վճարողներին անհրաժեշտ կոնկրետ խնդիրների լուծմանն աջակցելու և օպերատիվ կերպով արձագանքելու նպատակով հարկային ծառայությունում «թեժ գծիե գործարկման համար համապատասխան ընթացակարգերի սահմանում՝ միաժամանակ նախատեսելով ստացված տեղեկատվության օգտագործման մեխանիզմներ	01.10.08-31.12.08*
32.	Հաշվետվությունները հարկային մարմիններ փոստով կամ էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու վերաբերյալ լայնածավալ քարոզչություն	01.10.08-30.06.09
33.	Հարկ վճարողներից հաշվետվությունների ընդունման և փաստաթղթերի տրամադրման գործառույթի համար «մեկ պատուհանիե գործարկում: Դա ենթադրում է հաշվետվություններ ընդունող հանձնաժողովների լուծարում և հարկ վճարողների հետ անմիջական շփումների էական կրճատում	01.07.08-31.08.08

1	2	3
34.	Հարկային օրենսդրության դրույթների մեջ երկիմաստությունների և տարընթերցումների «գույքագրումե։ Արդյունում՝ երկիմաստությունների և տարընթերցումների մասին մուտքագրված տվյալների դասակարգ-ված առանձին բազայի ստեղծում։ Գույքագրումը ներառելու է նաև արտաքին հարցում։ Աշխատանքը կատարվելու է 2 փուլով՝ 1) հարկային վարչարարական դրույթներ (որն անմիջապես օգտա-գործվելու է ՀՀ Ազգային ժողովի հարկային օրենսգրքի ընդհանուր մասի քննարկումներին մասնակցելու նկատառումներով) 2) հարկերի հաշվարկմանը վերաբերող դրույթներ (որոնք օգտագործ-վելու են բացերը ծածկելու և հարկային քաղաքականության վերաբերյալ առաջարկություններ ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնելու համար)	01.10.08-31.01.09
35.	Հարկային օրենսդրության երկիմաստությունների և տարընթերցումների «գույքագրման» արդյունքում օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակում՝ օրենսդրական բացերը վերացնելու համար	01.02.09-30.06.09*

** Միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և (կամ) մարդկային ռեսուրսների ներգրավում։ Արտաքին ֆինանսական ռեսուրս ասելով՝ հասկացվում է ինչպես Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն, այնպես էլ՝ միջազգային կամ օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցները։*

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝ ՆՊԱՏԱԿ 4-Ի ԳԾՈՎ

- ***<u>Նպատակը</u>***. Հարկային պարտավորությունների կամավոր վճարման (ինքնագնահատման) սկզբունքի ամբողջական ներդրում

- ***<u>Քաղաքականությունները</u>***.

4.1. Անցում հաշվետվությունները հարկային մարմիններին փոստով կամ էլեկտրոնային տարբերակով ներկայացնելուն.

4.2. Հաշվետվությունների մշակման ավտոմատացված համակարգի ներդրում՝ ներառելով նաև հիշեցում-ծանուցումների ավտոմատ ուղարկումը.

4.3. Հարկ վճարողների սպասարկման կենտրոնների ստեղծում.

4.4. Հարկային ծառայությունն էականորեն բարելավելու է հարկ վճարողներին հարկային օրենքների կիրառման մասին պարզաբանումների տրամադրման մեխանիզմը.

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ		
NN ը/կ	*Միջոցառման անվանումը*	*Կատարման ժամկետը (սկիզբը և ավարտը. ամսաթիվը,ամիսը, տարեթիվը)*
1	2	3
36.	Հաշվետվությունները հարկային մարմիններ էլեկտրոնային տարբերակով ներակայացնելու ուղեցույցի կիրառմանն օժանդակություն	01.01.09-30.06.09*
37.	Հարկ վճարողների սպասարկման ամբողջական ռազմավարության սահմանում	01.01.09-28.02.09

1	2	3
38.	Հարկ վճարողների սպասարկման կենտրոնները (ներկայումս՝ ՀՏ-ների սպասարկման բաժինները) համապատասխան կադրերով համալրման նպատակով ուսումնական ծրագրի իրականացում	01.09.08-31.12.11*
39.	Հարկ վճարողների 5 սպասարկման կենտրոնների գործարկում	01.07.09-31.12.09*
40.	Հարկ վճարողների սպասարկման կենտրոնների (ներկայումս ՀՏ-ների սպասարկման բաժինների) կողմից իրականացվող գործառույթների վերաբերյալ զանգվածային իրազեկում	01.05.09-31.12.09
41.	Հարկ վճարողների սպասարկման կենտրոնների սկզբնական շրջանում աշխատանքների առանձին ամսական մոնիթորինգ	01.07.09-30.06.10
42.	Ամբողջական համակարգի ապահովում՝ որպես կանոն, հաշվետվությունները հարկային ծառայություն միայն էլեկտրոնային կամ սովորական փոստով ներկայացնելու նպատակով	01.07.08-30.06.09*
43.	Հարկ վճարողների հարկային օրենքների կիրառման մասին պարզաբանումների տրամադրման նպատակով օրենսդրական փոփոխության նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	01.12.08-31.01.09
44.	Հարկ վճարողներին պարզաբանումների տրամադրման ընթացակարգի սահմանում	01.02.09-30.04.09
45.	Սոցիալական գործընկերության շրջանակներում հարկային ծառայության պետին կից խորհրդի ստեղծում՝ ընդգրկելով պետական կառույցների, գործատուների միության, արհեստավարժ և գործարար միությունների, միջազգային կառույցների և միջազգային ծրագրերի ներկայացուցիչներին	01.07.08-31.09.08
46.	Ընթացակարգի սահմանում՝ հարկային ծառայության կողմից մշակված օրենսդրական և ընթացակարգային համապատասխան նախագծերը հասարակական քննարկումների պարտադիր ներկայացնելու համար։ Նախատեսվում է այդ քննարկումներն իրականացնել մինչև նախագծերն այլ գերատեսչություններ ներկայացնելը։	01.07.08-31.12.08
47.	Առանձին ֆորում ստեղծելու նպատակահարմարության հարցի քննարկում (այդ թվում՝ պրոֆեսիոնալ հանրության հետ), որը բաղկացած է լինելու միջազգային կամ բարձր վարկանիշ ունեցող աուդիտորական և հաշվապահական խորհրդատվական ընկերություններից, որոնց հարկային ծառայությունը յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ կներկայացնի առավել խնդրահարույց հարցերը։	01.02.09-30.04.09
48.	Պարտադիր պարբերական մամուլի հաղորդագրությունների տարածման, ասուլիսների կազմակերպման սովորույթի ներդրման նպատակով կանոնակարգի մշակում	01.11.08-31.12.08
49.	Հարկային վիճակագրական ամսական պարտադիր տեղեկատուի հրապարակում (նաև հարկային ծառայության ինտերնետային կայքում)։ Ներկայացվող ցուցանիշների փաթեթը ձևավորվելու է նաև հասարակական պահանջի հիման վրա (առկա է ԱՄՆ ՄԶԳ Հայաստանի հարկային կատարելագործման ծրագրի փորձը)։	01.10.08-31.12.11
50.	«Հարկային ժամե մշտական հեռուստատեսային և ռադիոհաղորդումների հեռարձակում։ Այս հարցի կապակցությամբ հարկային ծառայությունը համագործակցելու է նաև արհեստավարժ հասարակական կազմակերպությունների և միությունների հետ։	01.10.08-31.12.08*
51.	Էլեկտրոնային մեդիահոլովակների (CD-ներ) պատրաստում՝ հարկային օրենսդրության մատչելի մատուցման նպատակով, ինչը կներառի պատկերավոր օրինակներ՝ հարկ վճարողների առանձին խմբերի համար։	01.10.08-31.12.11
52.	Նոր ստեղծված հարկ վճարողներին՝ օժանդակության և սպասարկման ծառայայությունների նպատակով այցելությունների կանոնակարգի մշակում։ Այդ այցելությունները կարող են պատվիրվել ՀՎՀՀ ստանալու ժամանակ կամ հետագայում՝ առաջին 6 ամսվա ընթացքում։	01.04.09-30.04.09

1	2	3
53.	Հարկային ծառայության ինտերնետային կայքում հարկային հաշվետվությունների (հաշվարկների) դատարկ ձևաթղթերի տեղադրում՝ ապահովելով դրանց խմբագրման և տպագրման հնարավորությունները	01.10.08-31.03.09
54.	Հարկային ծառայության տարածքային ստորաբաժանումներում համակարգչային տերմինալների տեղադրում՝ էլեկտրոնային կրիչներով հարկային օրենսդրության, հարկային հաշվետվությունների ձևաթղթեր ստանալու, իսկ հետագայում՝ էլեկտրոնային եղանակներով հաշվետվությունների հանձնման հնարավորության ստեղծման նպատակով	01.04.09-30.06.09*
55.	Ընթացակարգի սահմանում, որը կկարգավորի հարկային ծառայությունում հարկ վճարողի մասին առկա տեղեկությունների՝ ներառյալ երրորդ անձանցից ստացվածը, ցանկի տրամադրումը հարկ վճարողներին	01.03.09-31.03.09
56.	Հարկային օրենսդրության վերաբերյալ հաճախ հանդիպող հարցերի համախմբման և օգտագործման տվյալների բազայի («գիտելիքների շտեմարանիե) հայեցակարգի («ճարտարապետությանե) մշակում: Այն տեխնիկական առաջադրանք է՝ բուն շտեմարանը կառուցելու համար:	01.10.08-30.04.09*
57.	Հարկային պրակտիկայում հաճախ հանդիպող հարցերի և դրանց պատասխանների տվյալների բազայի («գիտելիքների շտեմարանիե) ստեղծում՝ արագագործ փնտրման համակարգով: Այն օգնելու է միատեսակ պատասխաններ ապահովելուն: Առավել հաճախ հնչող հարցերը տեղաբաշխվելու են հարկային ծառայության ինտերնետային կայքում՝ տասնօրյակային թարմացմամբ:	01.05.09-30.11.09*
58.	Հարկային հաշվետվությունների և տեղեկությունների, ինչպես նաև հարկային հաշիվ-ապրանքագրերի ու այլ տեսակի սկզբնական փաստաթղթերի տեսակների, ձևաթղթերի գույքագրում և դրանց օպտիմալացման վերաբերյալ առաջարկությունների մշակում: Դա վերաբերելու է ինչպես դրանց քանակի, պարբերության, յուրաքանչյուրում պարունակվող տեղեկատվության ծավալի, շարադրանքի հստակ լեզվի, տեխնիկապես մշակման համար հարմարավետության, դիզայնի հարցերին: Գույքագրումը ներառելու է նաև արտաքին հարցումը:	01.10.08-28.02.09*
59.	Հարկային աշխատողների (ինչպես նաև հարկ վճարողների) իրազեկվածության աստիճանի բարձրացման և հարկատուների սխալների կանխարգելման նպատակով առավել հաճախ թույլ տրվող սխալների տեղեկատուի ստեղծում՝ամսական թարմացմամբ	01.05.09-30.11.09
60.	Հարկային միջնորդների ինստիտուտի (խորհրդատվական ընկերություններ, բանկեր և այլն) վերաբերյալ հայեցակարգի ձևավորում: Այդ ինստիտուտը կարևորվում է հայտարարագրման զանգվածային գործընթացի և գյուղատնտեսության հարկման համակարգի ներդրման առումով:	01.02.09-28.02.09
61.	Հարկային օրենսդրության մեջ կատարվող փոփոխությունների ամենամսյա համառոտագրի (դայջեստի) հրապարակում հարկային ծառայության ինտերնետային կայքում՝ մինչև յուրաքանչյուր ամսվա 7-ը	01.08.08-31.12.11

* *Միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և (կամ) մարդկային ռեսուրսների ներգրավում: Արտաքին ֆինանսական ռեսուրս ասելով՝ հասկացվում է ինչպես Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն, այնպես էլ՝ միջազգային կամ օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցները:*

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝ ՆՊԱՏԱԿ 5-Ի ԳԾՈՎ

- ***<u>Նպատակը</u>***. Հարկային ստուգումների նոր քաղաքականություն

- ***<u>Քաղաքականությունները</u>***.

5.1. Ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի ներդրում.

5.2. Կամերալ ուսումնասիրությունների ինստիտուտի վերակառուցում՝ հիմնված տվյալների մշակման ավտոմատ համակարգի և տվյալների ժամանակակից բազայի վրա.

5.3. Հարկային գերավճարների, ներառյալ՝ ԱԱՀ-ի գծով, վերադարձման ավտոմատացված համակարգի ներդրում, ինչպես նաև հարկային ապառքների նվազեցման միջոցառումների իրականացում.

5.4. Հարկային մարմնի օպերատիվ-հետախուզական, հետաքննության և քննչական գործառույթների նպատակայնության մեծացում, հարկային ծառայության այլ գործառույթների հետ փոխգործության օպտիմալ սխեմայի որոշում.

5.5. Հարկային օրենսդրությունը կանխամտածված (չարամտորեն) խախտողների նկատմամբ պատասխանատվության միջոցների խստացում։ Միաժամանակ, նորմատիվորեն պետք է սահմանվի դրա տարբերությունն օրենքի շրջանակներում թույլատրելի հարկային պլանավորումից։

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ		
NN ը/կ	*Միջոցառման անվանումը*	*Կատարման ժամկետը (սկիզբը և ավարտը. ամսաթիվը, ամիսը, տարեթիվը)*
1	2	3
62.	Հարկային օրենսդրության խախտումների համար պատասխանատվության նորմերի կիրառման պրակտիկայի ու արդյունավետության ուսումնասիրում։ Դրա արդյունքում հարկային օրենքը բազմակի և կոպտորեն խախտելու դեպքում պատասխանատվության միջոցների խստացման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը՝ ներառյալ թաքնված աշխատող ունենալու դեպքը։ Դա հանդիսանալու է որպես ինքնագնահատման (հարկերի կամավոր վճարում) համակարգի անհրաժեշտ տարր։	01.07.08-28.02.09
63.	Օրենսդրական փոփոխությունների նախագծերի նախապատրաստում և դրանք ներկայացնելը վարչարարական մեխանիզմներով բացառելու և կանխելու համար առանց փաստաթղթի կամ մասնակի փաստաթղթավորմամբ ապրանքաշրջա-նառությունը, անապրանք գործարքների իրականացումը, հարկային հաշիվներ դուրս չգրելու կամ չստանալու դեպքերը և «սևե հաշվապահության վարումը՝ անդրադառնալով նաև՝ - կանխիկով գործառնությունների սահմանափակումների հարցերին - մեծածախ և մանրածախ առևտրի կանոններում որոշակի փոփոխությունների կատարման նպատակահարմարության հարցին, ըստ որի վաճառքը որոշակի քանակություններից հետո (անկախ գնորդի ֆիզիկական անձ լինելու հանգաման-	01.06.08-31.12.08

1	2	3
	քից) կդիտվի որպես մեծածախ առևտուր՝ վճարահաշվարկային փաստաթղթի պարտադիր ձևակերպմամբ - ԱԱՀ-ի հաշվարկման և վերահսկման գործընթացների հեշտացման համար՝ ԱԱՀ-ի հատուկ համարակալված, վաճառքի ենթակա կարբոնացված ձևաթղթերի թողարկման ու կիրառության նպատակահարմարության հարցին - հարկ վճարողների կողմից համատեղ գործունեության հարկման հարցին	
64.	Հարկային հանցագործությունների կանխման և կանխարգելման, հարկային մարմնի օպերատիվ-հետախուզական, հետաքննության և քննչական գործառույթների նպատակայնության մեծացման, հարկային ծառայության այլ գործառույթների հետ փոխգործության օպտիմալացման նպատակով ներքին կանոնակարգի հաստատում: Նպատակը համատեղ ծրագրերի արդյունավետության բարձրացումն է՝ տեխնիկական և մասնագիտական հաղորդակցության կանոնակարգման միջոցով:	01.09.08-31.03.09
65.	Ստուգումների բնագավառը կանոնակարգող օրենսդրությամբ հարկային մարմիններին ընձեռված լիազորությունների կիրառման արդյունավետության ուսումնասիրում և գնահատում: Միաժամանակ նախապատրաստել և ՀՀ կառավարություն ներկայացնել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված մեխանիզմների բարեփոխման գծով օրենսդրական փոփոխություններ: Այն հստակորեն սահմանազատելու է հարկ վճարողի կողմից հարկերից չարամտորեն խուսափելու դեպքերը սովորական հարկային թույլատրելի պլանավորման քայլերից: Միաժամանակ, այն հարկային ծառայությանը հնարավորություն կտա, ըստ միջազգային չափանիշների, ստուգումներ իրականացնելու: Օրենսդրական փոփոխությունը պետք է նախատեսի նաև, որ հարկային ծառայությունը կարողանա օգտագործել հարկային ստուգումների այնպիսի ժամանակակից գործիքներ և տեխնիկա, որոնք հնարավորություն կտան վերահսկելու հարկատուների հաշվապահական հաշվառումը (հաշվապահական հաշվառման համակարգը)՝ ներառյալ համակարգչայնացվածը: Բացի դրանից, անհրաժեշտ է կանոնակարգել հարկային ստուգումների կասեցման ժամկետները և հիմքերը:	01.11.08-30.09.09*
66.	Ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության համակարգի (ՌՉՍՀ) համատարած գործարկման նպատակով 2007 թվականի նոյեմբերից պիլոտային ձևով կիրառվողի ուսումնասիրություն, համակարգի շտկում և համապատասխան ընթացակարգի սահմանում: Սա իրականացվելու է հարկային ծառայության կողմից հաստատված ստուգումների ազգային ծրագրի ճշգրտման միջոցով: Այն պետք է պարունակի համակարգից օգտվելու անվտանգության, կոնֆիդենցիալության բարձրագույն երաշխիքներ: Ենթադրվում է նաև իրականացնել երկրորդ պարտադիր ուսումնասիրություն և ճշգրտում գործարկումից մեկ տարի հետո: Ճշգրտման ժամանակ քննարկվելու են նաև՝ - երկար ժամանակահատվածում խախտումներ թույլ չտալը, ինչպես նաև անկախ աուդիտորական ստուգումներ անցած լինելը հարկ վճարողների համար ՌՉՍՀ չափանիշներ դիտարկելու և (կամ) դրանց կշիռների հարցում հաշվի առնելու հարցը - միջին բիզնեսի ներկայացուցիչների ցանկից պատահական ընտրանքով (համակարգչի միջոցով՝ թափանցիկ հայտարարված ընթացակարգերով) ստուգման ենթակա կազմակերպությունների ներառման մասին: Հարկային գերավճարների, ներառյալ՝ ԱԱՀ-ի գծով, վերադարձման դյուրացված համակարգի մշակում, պիլոտային ռեժիմով գործարկում, համակարգի շտկում և համապատասխան ընթացակարգերի սահմանում: Գործարկումից մեկ տարի հետո պարտադիր երկրորդ ուսումնասիրության անցկացում և ճշգրտում	01.07.08-31.08.09*
67.	ՌՉՍՀ ներդրման հետ միասին օրենսդրական փոփոխությունների նախապատրաստում և դրանք ՀՀ կառավարություն ներկայացնելը, որոնք սահմանելու են ՌՉՍՀ-ի իրավական հիմքերը, հարկային ստուգումների ընդհանուր կոնցեպցիայի	01.07.08-28.02.09

1	2	3
	առանձնահատկությունները: Նախատեսվում է, որ՝ - կամերալ ուսումնասիրությունը տեղափոխվում է սպասարկման գործառույթից և դառնում տվյալների մշակման պարտադիր ընթացակարգ՝ ընդգրկվելով ստուգումների ընդհանուր շղթայում՝ որպես ՌՉՍՀ-ի առաջին բաղադրիչ - սահմանվելու է, այսպես կոչված, «դեղինե և «կարմիրե գծերի ինստիտուտ՝ ըստ հարկ վճարողներին «շնորհվածե ռիսկայնության աստիճանի - հարկային ծառայությունը ձեռք է բերում լրացուցիչ հսկողական իրավասություններ «դեղինե գծի սահմանը հատած հարկ վճարողների նկատմամբ (լրացուցիչ ուսումնասիրություններ, չափագրումներ, հարկային գրքերի վարման նոր պահանջ և այլն) - նախատեսվում է ստեղծել հարկ վճարողների՝ «կարմիրե գոտի, այսինքն՝ ստուգվողների ցանկում տեղաբաշխելու վերջնական որոշում կայացնող (ստուգողներից անկախ գործող) վերլուծաբանների թիմ	
68.	Երրորդ անձանց կողմից տեղեկություններ ներկայացնելու կարգը հաստատելու մասին օրենքի նախագիծը ներկայացնելը, որը ենթադրում է նաև վարչական ռեգիստրների (սեփականության իրավունքի, ձեռնարկատիրական գործունեության իրավունքի, քաղաքացիական կացության, մաքսային, սոցիալական և այլ ռեգիստրներ) և «քվազիֆիսկալե ոլորտի ռեգիստրների (էլեկտրաէներգիայի, գազի, ջրի, կապի ծառայություններ) տեղեկությունների՝ կայուն պարբերականության հիմքով ստացում և օգտագործում	01.08.08-30.11.08
69.	Կուտակված հարկային ապառքների նվազման, ինչպես նաև նոր առաջացող հարկային ապառքների բացառման միջոցառումների ծրագրի մշակում	01.10.08-01.03.09
70.	ՀԴՄ-ի շահագործման հետ կապված հասարակության վերահսկողության մեխանիզմի մշակում՝ ներառյալ քաղաքացիների անձնական շահագրգռվածության գործոնը (օրինակ, կարող է ներդրվել վիճակախաղի գաղափարը)	01.10.08-30.06.09
71.	Միջազգային առաջատար փորձի գործնական կիրառման նպատակով (ստուգումների մասով) ՀՀ հարկային ծառայողների և արտերկրյա գործընկերների միջև համագործակցության, ուսուցումների ու փորձի փոխանակման առանձին ծրագրի մշակում: Այդ ծրագիրը պետք է կիրարկվի՝ սկսելով ԽՀՎՀՏ-ից և ընդգրկելով տնտեսության՝ հարկային իմաստով առավել ռիսկային դասակարգված ոլորտները:	01.11.08-31.12.11*
72.	ՀԴՄ-ների սպասարկման կենտրոնների մասնագետների հետ համատեղ «ՀԴՄ-ներին ներկայացվող պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման դրույթների հստակեցում և համապատասխան օրենսդրական փոփոխությունների պատրաստում: Նպատակը ժամանակակից սարքերի կիրառումը թույլ տալու և միաժամանակ հարկային հսկողությունն ապահովելն է:	01.07.08-28.02.09*
73.	Ստուգումների անցկացման ուղեցույցների, ընթացակարգերի, ըստ ոլորտների, հարկ վճարողների խմբերի, գործառնությունների տեսակների պատրաստում և այլն: Դրանք պետք է պարունակեն միջազգային լավագույն փորձը՝ անդրադառնալով նաև միջազգային գործառնությունների հարկման հարցերին (գների տրանսֆերտ, գույքի արժեքի հավելաճ, օֆշորային գործարքներ և այլն):	01.12.08-31.12.11*
74.	Ուսումնասիրել այլ երկրների հարկային մարմինների հետ համագործակցության հետ կապված հիմնախնդիրները և մշակել ներքին ուղեցույց՝ հարկային վարչարարության հարցերով: Այդ ուղեցույցը հնարավորություն կտա իրականացնելու համատեղ ստուգումներ:	01.02.09-31.06.09
75.	Ստուգումների գնահատման չափանիշների ներդրում և այդ չափանիշների հիման վրա ստուգման արդյունքների գնահատման իրականացում	01.01.09-30.06.09
76.	Միջգերատեսչական հարթության մակարդակով քննարկել և առաջարկել ակցիզային դրոշմանիշերին նմանատիպ դրոշմանիշերի կիրառման նպատակահարմարությունը ՀՀ կառավարության կողմից սահմանված ապրանքների նկատմամբ (Բելառուսի, Մոլդովայի և Ղազախստանի փորձը)	01.01.09-31.03.09

1	2	3
77.	Կենտրոնացված կարգով հարկ վճարող (բիզնես խմբի մեջ մտնող «դուստրե (աֆիլացված) ձեռնարկությունների) ինստիտուտի կիրարկման նպատակահարմարության հարցի ուսումնասիրում՝ ներառյալ միջազգային փորձի ուսումնասիրությունը	01.10.09-31.12.09*

* *Միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և (կամ) մարդկային ռեսուրսների ներգրավում: Արտաքին ֆինանսական ռեսուրս ասելով՝ հասկացվում է ինչպես Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն, այնպես էլ՝ միջազգային կամ օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցները:*

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝ ՆՊԱՏԱԿ 6-Ի ԳԾՈՎ

- ***Նպատակը***. Հարկային մարմնի կառավարման արդյունավետ համակարգի ներդրում

- ***Քաղաքականությունները***.

6.1. Անցում գործառույթների վրա հիմնված կառավարման սխեմայի: Վերափոխումն իրականացվելու է գլխավոր գրասենյակ-խոշոր հարկ վճարողների հարկային տեսչություն-տարածքային ստորաբաժանումներ փուլերով.

6.2. Տարածքային ստորաբաժանումների թվի կտրուկ փոքրացում՝ այն հավասարակշռելով տարածաշրջանային սպասարկման և տվյալների մշակման կենտրոններով, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ավելի ակտիվ ներգրավմամբ.

6.3. Մարդկային ռեսուրսների կառավարման արդի համակարգի ներդրում.

6.4. Աշխատողների և ստորաբաժանումների կատարողական չափանիշների համակարգի ներդրում՝ այն կապելով ոչ միայն վճարված հարկերի, այլև արտադրողականության և այլ ֆունկցիոնալ ցուցանիշների հետ.

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ		
NN ը/կ	*Միջոցառման անվանումը*	*Կատարման ժամկետը (սկիզբը և ավարտը. ամսաթիվը, ամիսը, տարեթիվը)*
1	2	3
78.	Դիտարկել հարկային վարչարարության բարեփոխումների փաստաթղթից, հարկային ծառայության հայտարարած նոր առաքելությունից և 7 հիմնական նպատակներից ու դրան համապատասխան քաղաքականություններից բխող հարկային ծառայության օրենսդրության մեջ փոփոխությունների կատարման անհրաժեշտությունը և համապատասխան օրենսդրական փաթեթ ներկայացնել ՀՀ կառավարություն:	01.10.08-31.12.08*
79.	Հասարակության լայն խավերին իրազեկել և ծանոթացնել հարկային վարչարարության առաքելության, հիմնական նպատակների և իրականացվելիք միջոցառումների մասին: Նպատակը թափանցիկ աշխատանքի և վստահության մթնոլորտի ձևավորումն է:	01.07.08-01.31.09
80.	Հարկային ծառայության կարողությունների ռազմավարական ծրագրավորման մոդել-ընթացակարգերի մշակում: Այդ մոդելը պետք է ապահովի կապակցումն ինչպես միջնաժամկետ ծախսային ծրագրերի, ՀՀ կառավարության ծրագրերի հետ, այնպես էլ պետք է ապահովի հարկային ծառայության տարբեր գործառույթների միջև օպերացիոն պլանավորման իրականացումը:	01.01.09-30.04.10*

1	2	3
81.	Հարկային ծառայությունում «կառավարման փոփոխություններիե (change management) ընթացակարգերի մշակում, տարածում և ուսուցանում	01.05.09-30.04.10*
82.	Աստիճանական անցում հարկային ծառայության աշխատանքների գնահատման արդյունքների կատարողական ցուցանիշների համակարգին: Դա կվերաբերի ինչպես ստորաբաժանումներին, այնպես էլ աշխատողներին:	01.01.09-31.01.10*
83.	Հարկային եկամուտների, ապառքների, գերավճարների վերլուծության համապարփակ մեթոդաբանության մշակում: Դա պետք է հնարավորություն տա դուրս բերելու ըստ ոլորտների, ըստ տարածաշրջանների, ըստ հարկատեսակների, ըստ ձեռնարկությունների չափի, ըստ ապրանքատեսակների և այլ՝ սովորաբար կարևոր համարվող չափանիշների:	01.07.08-30.04.09*
84.	Ուժեղացնել հարկային ծառայության վերլուծական-հետազոտական կարողությունները՝ ստեղծելով առանձին ենթածրագիր՝ համապատասխան բաղադրիչներով, ինչպես նաև ապահովելով «գիտելիքի փոխանցումըե ըստ բոլոր՝ վերլուծության գործառույթ ունեցող ստորաբաժանումների (անկախ կառավարման մակարդակի): Ենթադրվում է նաև կանխատեսումների կարողությունների զարգացում՝ համապատասխան գործիքի ստեղծմամբ:	01.12.08-31.12.11*
85.	Հարկային ծառայության կենտրոնական ապարատում գործառույթների վրա հիմնված կառուցվածքի և գործառույթների սահմանում	01.07.08-30.09.08
86.	Հարկային տեսչությունների՝ գործառույթների վրա հիմնված կառուցվածքի և գործառույթների սահմանում	01.07.08-31.12.08
87.	Հարկային ծառայության տարածքային ստորաբաժանումների թվի կրճատում	01.09.08-31.12.09
88.	Տվյալների մշակման տարածքային՝ մինչև 5 կենտրոնի ստեղծում և այդ կենտրոնների կողմից իրականացվող գործառույթների սահմանում: 2010 թ. վերջին բոլոր գործառույթներն իրականացվելու են մեկ միասնական տվյալների մշակման կենտրոնի միջոցով:	01.07.09-31.12.10*
89.	Տվյալների մշակման տարածքային կենտրոնները համապատասխան կադրերով համալրելու նպատակով ուսումնական ծրագրի իրականացում	01.05.09-31.12.11*
90.	Տվյալների մշակման տարածքային կենտրոնների կողմից մշակված տեղեկատվության համապատասխան ստորաբաժանումներին փոխանցման և այդ տեղեկատվությունից օգտվելու ընթացակարգերի սահմանում	01.03.09-31.05.09*
91.	Մշակել էթիկայի քաղաքականություն՝ ձևավորելով հարկային ծառայողի նոր ինստիտուտ, որը կբխի հարկային վարչարարության նոր տեսլականի ու հիմնական առաքելության հիմնադրույթներից և համահունչ կլինի հանրային ծառայողների շահերի բացահայտման ու շահերի բախման բացառման նպատակով իրականացվող բարեփոխումներին: Այն պետք է անդրադառնա նաև աշխատանքի ընդունման և հետագա գործունեության ընթացքում շահերի բախման ու առևտրային գաղտնիքի օգտագործման հիմնախնդիրներին:	01.12.08-31.05.09
92.	Հարկային ծառայողների պաշտոնների նկարագրերի սահմանում	01.10.08-31.10.09*
93.	Ստեղծել կատարողականի վրա հիմնված հաշվետվական համակարգ՝ նախատեսելով յուրաքանչյուր հարկային ծառայողի համար տեղեկությունների բանկի ստեղծում	01.10.08-31.10.09*
94.	Ձևավորել հարկային վարչարարության նկատմամբ հսկողական և վերահսկողական ընթացակարգեր և իրականացնել վարչարարության գործիքների արդյունավետության մոնիթորինգ:	01.10.08-31.10.09

* *Միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և (կամ) մարդկային ռեսուրսների ներգրավում: Արտաքին ֆինանսական ռեսուրս ասելով՝ հասկացվում է ինչպես Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն , այնպես էլ՝ միջազգային կամ օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցները:*

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ՝ ՆՊԱՏԱԿ 7-Ի ԳԾՈՎ

Ø ***<u>Նպատակը</u>***. Հարկային վարչարարության տեղեկատվական հոսքերի արդյունավետ կառավարման ապահովում:

Ø ***<u>Քաղաքականությունները</u>***.

7.1. Տեղեկատվական տեխնոլոգիաների նոր ռազմավարության սահմանում՝ ապահովելու համար հարկային ծառայության նոր սահմանված առաքելության և հիմնական 7 նպատակների իրագործումը.

7.2. Հարկ վճարողների մասին ամբողջականացված տվյալների ժամանակակից դարանի ստեղծում՝ ներառյալ երրորդ անձանցից օրենքով ստացվածը: Համակարգը պետք է ապահովի հարկ վճարողների անհատական տվյալների գաղտնիությունը.

7.3. Առավելագույնի հասցնել ժամանակակից ՏՏ համակարգերի կիրառումը հարկ վճարողների և հարկային ծառայության ներքին ստորաբաժանումների կողմից. Ինտերնետ, ներքին ցանց, պորտալներ, ժամանակակից լիցենզավորված ծրագրային ու գործիքային մեթոդների գծով վերապատրաստումներ.

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ) ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ		
NN ը/կ	*Միջոցառման անվանումը*	*Կատարման ժամկետը (սկիզբը և ավարտը. ամսաթիվը, ամիսը, տարեթիվը)*
1	2	3
95.	Հարկային ծառայությունում ՏՏ ոլորտի զարգացման ռազմավարության երկարաժամկետ ծրագրի մշակում	01.09.08-31.11.08
96.	Մշակել ուղեցույցներ, տարբեր ընթացակարգեր, հուշաթերթիկներ՝ նպատակ ունենալով առավելագույնի հասցնելու ժամանակակից ՏՏ տեխնոլոգիաների, գործիքների օգտագործումը՝ հարկային ծառայության ներսում կառավարման բարելավման ու արդյունավետության մեծացման համար	01.01.09-31.12.11
97.	Հարկային ծառայության տվյալների բազայի վերակառուցում՝ նպատակ ունենալով ապահովելու նաև արտաքին օգտագործողների համար մատչելի տեղեկատվությունը, մասնավորապես՝ էլեկտրոնային կառավարման ընդհանուր հայեցակարգի ներքո: Տվյալների բազան պետք է ներառի բազմաթիվ տնտեսական դասակարգիչներ՝ օգտագործողների վերլուծական պահանջներն ապահովելու համար՝ նախատեսելով միայն օրենքի համաձայն հավաքագրվող տեղեկություններ:	01.12.08-31.12.11*
98.	Հաշվետվությունները հարկային մարմիններ էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու համար համապատասխան օրենսդրական փոփոխությունների իրականացման անհրաժեշտության ուսումնասիրություն	01.10.08-31.12.08
99.	Հաշվետվությունները հարկային մարմիններ էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու համար համապատասխան համակարգչային ծրագրի մշակման տեխնիկական առաջադրանքի պատրաստում՝ յուրաքանչյուր հարկատեսակի համար	01.09.08-30.10.08*
100.	Հաշվետվությունները հարկային մարմիններ էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու ծրագրի ներդրում և փորձնական կիրառում: Հիմք է ընդունվելու ՏՏ միության հետ կնքվելիք հուշագիրը:	01.10.08-31.03.09
101.	Հաշվետվությունները հարկային մարմիններ էլեկտրոնային տարբերակով ներկայացնելու ուղեցույցի պատրաստում՝ պիլոտային փարձարկմանը զուգահեռ	01.10.08-30.10.08
102.	Հաշվետվություններ (հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ	01.12.08-31.03.09

1	2	3
	տեղեկություններ, տեղեկանքներ) չներկայացրած հարկ վճարողներին հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ ծրագրի ներդրում։ Նախատեվում է առաջին հիշեցում-ծանուցումները բոլոր հարկ վճարողներին ուղարկել ոչ ուշ, քան 2009 թ. մարտ ամսվա վերջը։	
103.	Վճարումներ չկատարած հարկ վճարողներին ներկայացվող հիշեցում-ծանուցումների ծավալի և դրանք ներկայացնելու պարբերականության սահմանման համար օրենսդրական փոփոխությունների կատարման անհրաժեշտության ուսումնասիրություն	01.11.08-31.01.09
104.	Հաշվետվությունների մշակման ավտոմատացված նորացված համակարգի ներդրման և վճարումներ չկատարած հարկ վճարողներին հիշեցում-ծանուցումների ավտոմատ ուղարկման համար համապատասխան համակարգչային ծրագրի մշակում	01.12.08-28.02.09*
105.	Հաշվետվությունների մշակման ավտոմատացված համակարգի և վճարումներ չկատարած հարկ վճարողներին հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ համակարգի փորձնական կիրառում։ Հիմք է ընդունվելու, մասնավորապես, ՏՏ միության հետ կնքվելիք հուշագիրը։	01.02.09-31.03.09
106.	Հաշվետվությունների մշակման ավտոմատացված համակարգի և հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատ համակարգի ամբողջական կիրառում։ Նախատեվում է առաջին հիշեցում-ծանուցումները բոլոր հարկ վճարողներին ուղարկել 2009 թ. մարտ ամսվա ընթացքում։	01.04.09-31.12.09*
107.	Կրկնությունների և թղթային հաշվետվությունների (տեղեկատվության) բացառման նպատակով հարկային տեսչություններից հավաքագրվող տեղեկատվության «գույքագրումե և օպտիմալացում	01.08.08-31.10.08
108.	Հարկ վճարողների վերաբերյալ երրորդ անձանցից ստացվող տեղեկությունների ընդունման ծրագրի մշակում և տեղեկատվական բազայի ստեղծում՝ նախատեսելով օգտագործողների համար առավել մատչելիություն	01.02.09-30.04.09*
109.	Հարկ վճարողների մասին ամբողջականացված տվյալների ժամանակակից դարանի ստեղծման նպատակով դա օգտագործողների կարիքների գնահատում և բազայի նորացում	01.10.08-30.04.09

* *Միջոցառումը ենթադրում է արտաքին ֆինանսական և (կամ) մարդկային ռեսուրսների ներգրավում։ Արտաքին ֆինանսական ռեսուրս ասելով՝ հասկացվում է ինչպես Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն, այնպես էլ՝ միջազգային կամ օտարերկրյա դոնոր կազմակերպությունների միջոցները».*

2) որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

3) որոշման N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2009 թ. հունվարի

09_0061

Երևան